ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա

Մասնագիտություն՝

իրավագիտություն

Թեմա՝ Գարեգին Նժդեհ

Կատարող՝ Վահե Սևոյան

2016 թվական

Հաղթում է ուժեղը և ոչ արդարը

Կյանքը

Գարեգին Նժդեհը (իսկական ազգանունը՝ Տեր-Հարությունյան, Նժդեհ ծածկանվան առաջին գրավոր հիշատակությունը 1906 թ-ի սեպտեմբերի 27-ից է) սովորել է Նախիջևանի ռուսական 7-ամյա դպրոցում, ապա՝ Թիֆլիսի ռուսական գիմնազիայում և Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբանության բաժնում: 1907 թ-ին ավարտել է Սոֆիայի սպայական դպրոցը, ընդունվել ՀՅԴ կուսակցության շարքերը, որից հեռացել է 1937 թ-ին: 1908 թ-ին վերադարձել է Կովկաս: 1909 թ-ին ցարական ոստիկանությունը ձերբակալել է նրան (զենք տեղափոխելու համար), 1912 թ-ին ազատվել է բանտից և մեկնել Բուլղարիա: Մասնակցել է Բալկանյան 1-ին պատերազմին (1912–13 թթ.). Անդրանիկի հետ կազմավորել է հայկական կամավորական վաշտ (271 զինվոր) և բուլղարական բանակի կամավորական միավորման կազմում կռվել թուրքերի դեմ. պարգևատրվել է «Սպայական քաջության խաչ» շքանշանով:

Առաջին համաշխարհային պատերազմի (1914–18 թթ.) ժամանակ նշանակվել է կամավորական 2-րդ գնդի հրամանատար Դրոյի (Դրաստամատ Կանայան) տեղակալ, 1916 թ-ին՝ կամավորական գնդերը ցրելուց հետո, անցել է Ալեքսանդրապոլ: 1918 թ-ին հեծյալների հարյուրյակով մասնակցել է Ղարաքիլիսայի ճակատամարտին (մայիսի 24–28-ը): Հայաստանի Հանրապետության (1918–20 թթ.) հռչակման առաջին օրվանից զբաղվել է ազգային բանակի կազմավորման և ուսուցման աշխատանքով:

1919 թ-ի հոկտեմբերից Զանգեզուրի (ներկայիս ՀՀ Սյունիքի մարզի տարածքը) զինված ուժերի հրամանատարն էր, որոնք նոյեմբերին կազմակերպված դիմադրություն են ցույց տվել թուրք-թաթարական զորքերին:

1920 թ-ի հուլիսին 11-րդ Կարմիր բանակի դեմ Նժդեհն իր փոքրաթիվ ուժերով մի քանի շաբաթ անհավասար մարտեր է մղել Կապանի պաշտպանության համար:

1920 թ-ի օգոստոսի 10-ին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը պետք է ժամանակավորապես վերահսկեին խորհրդային ուժերը՝ մինչև Հայաստանի և Ադրբեջանի (ապրիլի 28-ից՝ խորհրդային) միջև վիճելի տարածքների պատկանելության հարցի խաղաղ ճանապարհով լուծումը: Սակայն Զանգեզուրի ժողովուրդը՝ Նժդեհի գլխավորությամբ, չի ճանաչել այդ համաձայնագիրը

1921 թ-ի հուլիսի կեսերին, Սյունիքը Խորհրդային Հայաստանին միացնելու երաշխիքներ ստանալուց հետո, Նժդեհը փոքր զորախմբով անցել է Իրան, 1922 թ-ին մեկնել Սոֆիա: 1932–34 թթ-ին բնակվել է ԱՄՆ-ում, որտեղ մշակել է Ցեղակրոն վարդապետությունը և սկզբնավորել համանուն շարժումը:

1944 թ-ի սեպտեմբերին խորհրդային բանակի՝ Բուլղարիա մտնելուց հետո՝ հոկտեմբերի 10-ին, Նժդեհը ձերբակալվել է. նրան տեղափոխել են Բուխարեստ, ապա՝ Մոսկվա, և բանտարկել Լուբյանկայի բանտում: 1946 թ-ի նոյեմբերին ուղարկել են Երևան (ԽՍՀՄ-Թուրքիա ենթադրվող պատերազմում օգտագործելու նպատակով), դատապարտել 25 տարվա բանտարկության: 1948 թ-ին տեղափոխել են Վլադիմիրի բանտ (Ռուսաստան), որտեղ և վախճանվել է (դեկտեմբերի 21-ին) ու թաղվել բանտին կից գերեզմանատանը:

1983 թ-ին Նժդեհի աճյունը գաղտնի տեղափոխվել է Երևան, որից մի մասունք ամփոփվել է Խուստուփի լանջին (2001 թ-ին կանգնեցվել է կիսանդրին), աճյունը 1987 թ-ին՝ Սպիտակավոր Սբ Աստվածածին վանքի բակում (ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղի մոտ): 2005 թ-ի ապրիլի 26-ին աճյունի մի մասը զինվորական պատիվներով վերաթաղվել է Կապանում, որտեղ ստեղծվել է Նժդեհին նվիրված հուշահամալիր:

2001 թ-ին Երևանում լույս է տեսել Նժդեհի երկերի «Հատընտիր» ժողովածուն, 2002 թ-ին՝ երկհատորյանը:

Հայաստանի առաջին հանրապետությունը Նժդեհին պարգևատրել է «Մեծն Վարդան», [illegible]ստանի Հանրապետությունը՝ «Խուստուփի արծիվ» շքանշաններով:

Գարեգին Նժդեհի անունով Երևանում կոչվել են դպրոց, հրապարակ, փողոց, մետրոպոլիտենի կայարան, Գյումրիում՝ փողոց, հրապարակ, որտեղ և կանգնեցվել է նրա հուշարձանը:



Թևավոր խոսքերից

«Ազգային ոգի – ահա՛ գերագույն հերոսը, միա՛կը, մեր պատմության անիվը դարձնող, մեր հավաքական ճակատագիրը վարող հերոսը»:
Գարեգին Նժդեհ

«Հոգու հիվանդություն ունեն ժողովուրդները, երբ բողոքում են իրենց հայրենիքից»:
«Պիտ պարտվի, պիտ մեռնի կեղծիքը մեր կյանքում, որ ապրի մեր ժողովուրդը»:
«Փոքր ազգերը պարտադրորեն ավելի հայրենասեր պիտ լինեն, քան մեծերը, մենք՝ ավելի, քան բոլորը»:
Գարեգին Նժդեհ

Իր խորքի մեջ մոլար է ամեն վարդապետություն, կրոնական թե ընկերային, որը մտավոր կուրություն է պահանջում իր դավանողներից:

Այո՛, կեղծ է, հակամարդկային նմանը, որով եւ՝ մերժելի

Իրավունքը ուժի հասկացողություն է, այլ ոչ տրամաբանական:

Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի եւ մահվան առջև՝ հաղթական հայրենիք չի ունենա:

Կրոնների պես հայրենիքներն էլ պահանջում են, որ իրենց սպասարկողի ձեռքերը լինեն տաք եւ մաքրամաքուր:

Ապագան վտանգված ժողովուրդների վերջին խաղաթուղթը — վերադաստիարակությունն է:

«Զորեղ տպավորություն կձգե զինվորներու վերաբերումը դեպի իրենց հրամանատար Նժդեհը: Այդ հարաբերություն չէ դեպի իրենց պետը, այլ մասնավոր երկրպագություն գերագույն էակի մը հանդեպ: Զինվորը հանձին անոր կտեսնե մարմնացումը թագավորի մը, որը իմաստությամբ կկառավարե հայ ժողովուրդը»:
Գնդապետ Ֆիլիպով,
բուլղարական բանակի սպա

Նյութի աղբյուրները

- https://npatak.wordpress.com/2012/04/08/%D5%A3%D5%A1%D6%80%D5%A5%D5%A3%D5%AB%D5%B6-%D5%B6%D5%AA%D5%A4%D5%A5%D5%B0%D5%AB-%D5%B0%D5%A6%D5%B8%D6%80-%D5%B4%D5%BF%D6%84%D5%A5%D6%80%D5%A8/
- http://www.encyclopedia.am/pages.php?hId=1285
- https://hy.wikiquote.org/wiki/%D4%B3%D5%A1%D6%80%D5%A5%D5%A3%D5%AB%D5%B6_%D5%86%D5%AA%D5%A4%D5%A5%D5%B0